ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՓԵՏՐՎԱՐ 2026

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ–7–Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 19.02.2026 թ.), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–8–Ն (ընդունված՝ 20.01.2026 թ., ուժի մեջ՝ 01.06.2026թ.)

- Փոփոխությունների ընդունման նպատակը պետական սահմանի ցամաքային անցման կետերում տրանսպորտային միջոցների մուտքի ժամանակ հարկերի ու վճարների գանձման արդյունքում առաջացող կուտակումների նվազեցումն է և որոշակի դեպքերի համար ճանապարհային հարկի արտոնություն սահմանելն է: նախատեսվում է ՀՀ պետական սահմանի ցամաքային անցման կետերում վճարվող բնապահպանական հարկի, ճանապարհային հարկի և պետական տուրքի վճարումների հետաձգում.
  1. բնապահպանական հարկի վճարման ժամկետ կսահմանվի մինչև ավտոտրանսպորտային միջոցների մուտք գործելու օրվան հաջորդող 15-րդ օրը ներառյալ, իսկ մինչև նշված ժամկետը ելքի դեպքում՝ մինչև ելքը,
  2. ճանապարհային հարկի վճարման ժամկետ կսահմանվի մինչև ավտոտրանսպարտային միջոցների ՀՀ մուտք գործելու օրվան հաջորդող 15-րդ օրը ներառյալ, իսկ մինչև նշված ժամկետը ՀՀ տարածքից ելքի դեպքում՝ մինչև ելքը,
  3. ՀՀ տարածքում 15 օրից ավելի գտնվելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ 15 օրվա կամ ավելի պակաս ժամկետի համար ճանապարհային հարկի վճարման ժամկետ կսահմանվի մինչև ՀՀ տարածքում գտնվելու 15–օրյա ժամկետը լրանալու օրվան հաջորդող 5-րդ օրը, իսկ մինչև նշված ժամկետը ելքի դեպքում՝ մինչև ելքը:
- Նաև, ավտոտրանսպորտային միջոցների ելքի ժամանակ հաշվարկված բնապահպանական և ճանապարհային հարկի գումարից պակաս վճարումների դեպքում մաքսային մարմինները պակաս վճարված հարկի գումարը և հարկի վճարումն ուշացնելու համար օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի գումարները գանձում են ավտոտրանսպորտային միջոցների ելքի ժամանակ:
- Մաքսային մարմինները կատարում են բնապահպանական և ճանապարհային հարկի պարտավորությունների հաշվառում՝ վճարումների անդորրագրերը հետագայում կրկին որպես ճանապարհային հարկի վճարումը հավաստող փաստաթուղթ չօգտագործվելու համար:
- «Պետական տուրքի մասին» օրենքի 19.9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված է պետական տուրք՝ ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ներքին մաքսային մարմին մեկ տարանցման հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար՝ անկախ քաշից և միաժամանակ նույն մասի 5-րդ կետով սահմանված է պետական տուրք՝ մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար: Գործնականում 4-րդ կետով սահմանված պետական տուրքը վճարվում է անցման կետերում, իսկ 5-րդ կետով սահմանված պետական տուրքը՝ ապրանքների հայտարարագրի ներկայացնելուց հետո: Կատարվող փոփոխությամբ ուժը կորցրած է ճանաչվում 4-րդ կետը և համապատասխան փոփոխության ենթարկվում մյուս դրույքաչափերը:
- ՀՀ-ում չգրանցված բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների ՀՀ տարածքից ելքը ճանապարհի անանցանելիությամբ պայմանավորված անհնար լինելու դեպքում ճանապարհային հարկ վճարողներն ազատվում են համապատասխան ժամանակահատվածի համար հաշվարկման ենթակա ճանապարհային հարկից: Արտոնությունից օգտվելու իրավունքը կհավաստվի լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքով:
- Պետական տուրքի մասով փոփոխությունները ուժի մեջ կնտնեն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող 7-րդ ամսվա 1-ից, իսկ բնապահպանական և ճանապարհային հարկի մասով փոփոխությունները կտարածվեն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների մասով:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ–6–Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 19.02.2026թ.)

- Առաջարկվում է ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգ մի շարք մարմիններում և կազմակերպություններում, օրինակ՝ հանրային իշխանության մարմիններում, առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման բնագավառներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, հիսուն տոկոս և ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր ունեցող ընկերություններում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ–5–Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 19.02.2026թ.)

- Առաջարկվում է ռեհաբիլիտացիայի իրական հնարավորություն այն անձանց համար, ովքեր օրենքով չնախատեսված լինելով հանդերձ ներգրավվել են քրեական գործընթացների մեջ՝ քրեական պատասխանատվության համար նախատեսված տարիքային շեմին չհասնելու պայմաններում: Փոփոխություններ են նախատեսվում նաև խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու կառուցակարգերում:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–9–Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 19.02.2026թ.)

- Նախատեսվում է սահմանել իրավունքներ, պարտականություններ և սահմանափակումներ ինչպես օրենքի իմաստով ծառայություններ մատուցողների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության որակավորված գնահատողների և գնահատման կազմակերպությունների համար:
- Նաև, կատարվում են փոփոխություններ հաշվառման ծրագրի կիրառման կարգում, սահմանվում են նոր իրավասություններ Կադաստրի կոմիտեի համար՝ որպես գնահատման գործունեության ոլորտը կարգավորող, վերահսկող և որակավորում իրականացնող լիազոր մարմնի:

«ՀՀ կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-10-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 14.02.2026թ.)

- Համաձայնագիրը նպաստում է երկու երկրների մշակութային ժառանգության և համայն մարդկությանը պատկանող մշակութային ժառանգության պահպանմանն ու պահպանությանը և պատշաճ կերպով պաշտպանվածությանը:
- Համաձայնագրի շրջանակում անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն մշակութային արժեքների հափշտակման, անօրինական պեղումների և ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցման կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեմ պայքարելու համար:

ՀՀ-ի ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-41-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 24.02.2026թ.)

- ՀՀ-ի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրի հիման վրա նախատեսվում է մեծացնել ՀՀ զբոսաշրջության ներուժը՝ երկրի մի քանի մարզերում թիրախային ենթակառուցվածքային ներդրումների միջոցով:
- Ծրագրի արժեքը կազմում է 120,500,000 եվրո և դրա վերջնաժակետ է սահմանվում 2030 թվականի օգոստոսի 31-ը:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-47-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 07.03.2026թ.)

- Նախատեսվում են արտոնություններ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու ընտանեկան բռնության ենթարկված այն անձանց համար, ովքեր ամուսնալուծության, հայրության որոշման վերաբերյալ հարցերով և այլն:

«Օտարերկրացիների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ–11–Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 01.11.2026թ.)

- Փոփոխությունները նպատակ ունեն թվայնացնել օտարերկրացիներին կացության կարգավիճակների տրամադրման գործընթացը, կատարելագործել օտարերկրացիների հաշվառման վարչարարությունը, բարձրացնել դրա արդյունավետությունը, հստակեցնել կացության կարգավիճակների տեսակներն ու կացության կարգավիճակ տալու վարույթի իրականացման մեխանիզմները:
- Մասնավորապես ՝ հրաժարվել աշխատանքի թույլտվության, հետևաբար ՝ նաև դրա բացառությունների համակարգից, փոխարենը որպես ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հիմք սահմանելով աշխատանքային վիզայի, աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանում գտնվելու (բնակվելու) թույլտվության առկայությունը, միաժամանակ սահմանելով առանց աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ՀՀ-ում գտնվելու (բնակվելու) թույլտվության աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կնքելու իրավունք ունեցող օտարերկրացիների շրջանակը, սահմանել աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ՀՀ-ում գտնվելու (բնակվելու) թույլտվության հասկացությունը՝ նպատակ ունենալով իրականացնել Հայաստանում օրինական գտնվելու ժամկետում աշխատել ցանկացող օտարերկրացիների հաշվառում, սահմանել քվոտայի հասկացությունը, որը թույլ կտա Կառավարությանը կարգավորել օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող կացության կարգավիճակների սահմանաչափն՝ ըստ կացության կարգավիճակների տեսակի, քանակի և հիմքերի, հստակեցնել ներդրումներ իրականացնելու և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրություն ունեցող օտարերկրացիների օրինական կացության կազմակերպման գործընթացը:
- Գործող կարգավորումներով օտարերկրյա քաղաքացիները կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացնելու հիմքով կացության կարգավիճակի դիմում ներկայացնելու համար գումարի որևէ շեմ սահմանված չէ, առաջարկվում է սահմանել համապատասխան շեմ ձեռնարկատիրական գործունեության հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար:

«Կլիմայի մասին» օրենք և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–17–Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 23.02.2026թ.)

- Օրենքի հիմնական նպատակներն են ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված գործողությունների պլանավորման և իրականացման համար՝ համաձայն ՀՀ միջազգային պարտավորությունների և հանձնառությունների ապահովումը և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորման և իրականացման համար բնակչության, տնտեսության և ենթակառուցվածքների պաշտպանությունը: Նաև, սահմանվում են կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում կառավարության, պետական կառավարման համակարգի այլ մարմինների, մարզպետի և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Կազմավորվելու է նաև Կլիմայի փոփոխության հարցերով խորհուրդը:
- Նախատեսվում է նաև, որ կլիմայական ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցներից, միջազգային կազմակերպություններից, մասնավոր և այլընտրանքային ազգային կամ միջազգային աղբյուրներից ստացվող, ինչպես նաև հհ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից: Թափանցիկության ընդլայնված շրջանակին ինտեգրվելու նպատակով կառավարությունը ապահովելու է նաև չափումների, հաշվետվողականության և հավաստագրման համակարգի գործարկումը:

ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-43-Ն, «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-44-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 05.03.2026թ.)

- Օրենքով նախատեսվում է, որ գետերի վարարումների հետևանքով հեղեղումները կանխելու, ոռոգելի աղակալված հողերի լվացման, ոռոգելի հողերին խոնավալիցք հաղորդելու և ոռոգում կատարելու նպատակով՝ բացառապես ինքնահոս եղանակով հաշվառված և ոչ ջրամբարներից բաց թողնված ջուրը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան տրված ջրօգտագործման թույլտվությամբ ջրօգտագործողներին մատակարարվում է անհատույց՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով:
- Ինչպես նաև սահմանվում է, որ ջրային ռեսուրսների նվազման հետևանքները մեղմելու և ջրալրում իրականացնելու, ինչպես նաև ոռոգելի հողերին խոնավալիցք հաղորդելու նպատակով ջրային ռեսուրսները տեղափոխվում են անհատույց Ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխան տրված ջրօգտագործման թույլտվությամբ:

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-28-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 17.02.2026թ.)

- Նոր խմբագրությամբ սահմանվում են այն պայմանները, որոնց միաժամանակյա առկայության դեպքում օտարման նպատակը կարող է ճանաչվել որպես հանրության գերակա շահ (օրինակ՝ հանրային գերակա շահը պետք է ողջամտորեն իրագործելի լինի սահմանված վերջնաժամկետում):
- Հանրության գերակա շահ ճանաչելու որոշումներում կներառվի նաև օտարման ենթակա յուրաքանչյուր սեփականության մասով հանրային գերակա շահ ճանաչելու համար անհրաժեշտ պայմանների առկայությունը հիմնավորելու պահանջը, սահմանելով որպես հանրության գերակա շահ ճանաչվող սեփականության ձեռքբերող պետության հանդես գալու կանոնը՝ նախատեսելով, որ ձեռքբերողի այլ սուբյեկտ հանդես գալու դեպքում գերակա շահ ճանաչելու վերաբերյալ որոշումը պետք է ներառի նաև այլ սուբյեկտ հանդես գալու հիմնավորումը: Ի թիվս օրենքով նախատեսված այլ պահանջների, պետք է նշվի նաև օտարման նպատակի իրագործումը սկսելու և ավարտելու վերջնաժամկետը:
- Սահմանվում է նաև, որ կազմակերպությունների դեպքում ձեռքբերողի ընտրությունն իրականացվում է Կառավարության սահմանված կարգով:
- Ձեռքբերողի և օտարման սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրով որոշվում են (ի թիվս այլնի) օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, որը հստակ սահմանվել է, որ չի կարող պակաս լինել օրենքով նախատեսված փոխհատուցման կարգավորումներում նշված չափից:
- Ձեռքբերողը կունենա նոր պարտականություն՝ օտարվող գույքն ազատելուց և ձեռքբերողին հանձնելուց հետո 3–օրյա ժամկետում սեփականատիրոջը և գույքային իրավունքներ ունեցողներին տրամադրել **լրացուցիչ փոխհատուցում**՝ օտարվող գույքի շուկայական արժեքի, իսկ գույքային իրավունքներ ունեցողին՝ գույքային իրավունքի շուկայական արժեքի, 15% չափով՝ որպես սեփականատիրոջն ու սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողների տրվող խրախուսող փոխհատուցում:
- Ձեռքբերողի համար սահմանել վարչական պատասխանատվություն՝ տուգանք՝ սեփականության օտարման նպատակի իրագործումը օրենքով սահմանված ժամկետում չսկսելու, Կառավարության որոշմամբ սահմանված ժամկետում չավարտելու, ինչպես նաև հանրության գերակա շահ ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող խախտումներ թույլ տալու համար:

««Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և ««Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերը վավերացնելու մասին ՀՕ-42-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 24.02.2026թ.)

- Առաջարկվում է ապահովել չափագիտության ոլորտում միջազգային երկու հեղինակավոր կառույցներին ՀՀ-ն, հանձինս «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի ասոցացված և թղթակցային անդամ դառնալու գործընթացը:
- ՀՀ-ի անդամակցությունը միջազգային չափագիտության կազմակերպություններին, մասնավորապես՝ OIML-ին (International Organization of Legal Metrology) և BIPM-ին (Bureau International des Poids et Mesures), ունի մի շարք կարևոր ռազմավարական:

«Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-45-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 07.03.2026թ.)

- Օրենքի ընդունման արդյունքում նորմատիվ իրավական հիմք է ստեղծվել Կառավարության կողմից Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված արդարացի փոխհատուցման տրամադրման, այն ստանալու նպատակով ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման կարգը սահմանելու համար, քանի որ դա ևս համարվում է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի լիազորությունը:

««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-46-Ն (ընդունված՝ 11.02.2026թ., ուժի մեջ՝ 26.02.2026թ.)

- Սույն փոփոխությունը կատարվում է 2024 թվականի հունվարի 16-ի ՀՕ-23-Ն օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու և բարեհաջող իրականացվելու լույսի ներքո, որով առաջարկվում էր օրենքի խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են ՀՀ պետական բյուջե վճարել 15 միլիոն ՀՀ դրամ: Առաջարկվում է տվյալ արտոնությունը սահմանել նաև օրենքի ընդունումից հետո 27 տարին լրացած անձինք նույնպես կարողանան օգտվել այս օրենքից:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–48–Ն, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–49–Ն (ընդունված՝ 13.02.2026թ, ուժի մեջ՝ 07.03.2026թ.)

- Փաթեթի ընդունմամբ ստեղծվում է իրավական հիմք հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրման կամ վերանորոգման դիմաց փոխհատուցում ապահովելու համար՝ ոչ միայն պետական բյուջեի, այլև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:
- Նախատեսվում է նաև, որ այն անձինք, ովքեր անցել են ֆունկցիոնալության գնահատում և նրանց վերաբերյալ առկա է ուժի մեջ գտնվող ֆունկցիոնալության գնահատման որոշում, ապա նոր ծառայություններ ստանալու համար կրկին ֆունկցիոնալության գնահատում չեն անցնի, այլ փոփոխությունը կկատարվի միայն ԾԱԾ-ում:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում և այլ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–50–Ն (ընդունված՝ 13.02.2026թ. ուժի մեջ՝ 28.02.2026թ.)

- Խաղային օպերատորի ընտրության ընթացակարգը լրացվում է բողոքարկման իրավունքի հնարավորությամբ, մասնավորապես՝ օպերատորի ընտրության ընթացակարգի արդյունքներով շահագրգիռ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի՝ որակավորման հայտը մերժելու կամ հաղթող հայտատուի հայտարարման վերաբերյալ որոշումը համապատասխան որոշման ծանուցման կամ հրապարակման օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:
- Ինչպես նաև նախատեսվում է, որ օպերատորի ընտրության ընթացակարգի, այդ թվում՝ Հանձնաժողովի որոշումների բողոքարկման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-39-Ն և «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-40-Ն (ընդունված՝ 13.02.2026թ, ուժի մեջ՝ 24.02.2026թ.)

- «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-525-Ն օրենքով ներդրվել է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգ, որով սահմանվել է, որ 2026թ. հունվարի 1-ից՝ աշխատանքային պայմանագրերի կնքումը, դադարումը եւ փոփոխումն իրականացվելու է բացառապես թվային համակարգով: Ընդ որում, սահմանվել է, որ թվային համակարգում աշխատանքային պայմանագրերը կնքվում են կողմերի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- Համապատասխան փոփոխությամբ սահմանվել է, որ՝

1. 2027թ. հուլիսի 1-ից աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումն իրականացվում են թվային համակարգի միջոցով, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
2. մինչև 2027թ. հուլիսի 1-ը աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումը կարող են իրականացվել նաև թվային համակարգի միջոցով:
3. Եթե աշխատանքային հարաբերությունը ծագում է ՀՀ-ից դուրս գտնվող անձի հետ (աշխատանքը կատարվելու է ՀՀ-ից դուրս այլ վայրում), ապա վերջինիս հետ աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումը թվային համակարգի միջոցով չեն իրականացվում:
4. մինչև 2027թ. հուլիսի 1-ը աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումը նաև թվային համակարգի միջոցով իրականացնելու կարգավորումը տարածվում է նաև 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած աշխատանքային հարաբերությունների վրա:
5. Մինչեւ 2027թ. հուլիսի 1-ը կնքված եւ շարունակվող աշխատանքային պայմանագրերը, ինչպես նաեւ մինչեւ 2025թ. հուլիսի 1-ն ընդունված եւ գործող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը գործատուները թվային համակարգ են մուտքագրում 2026թ. հունվարի 1-ից մինչեւ 2028թ. հունիսի 30-ը՝ մուտքագրման պահին գործող պայմաններով (եթե աշխատանքային պայմանագրերը չեն կնքվել, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը չեն ընդունվել թվային համակարգի միջոցով):
6. Մինչեւ 2027թ. հուլիսի 1-ը կնքված եւ շարունակվող աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաեւ մինչեւ 2025թ. հուլիսի 1-ն ընդունված եւ գործող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի թվային համակարգ մուտքագրման կարգը սահմանում է Կառավարությունը:

ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍԻՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ*

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ–4–Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 12.02.2026թ.)

- Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված իրավախախտումների գործերով վարույթի առանձնահատկությունները կիրառելի կլինեն նաև ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցներով «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված՝ օտարերկրացի համարվող և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ չունեցող անձանց կողմից կատարված և օրենքով քննության ենթակա գործերով կայացված վարչական ակտերի նկատմամբ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ–207–Ն (ընդունված՝ 07.05.2021թ., ուժի մեջ՝ 07.02.2026թ.)

- Տվյալ փոփոխությունը ամրագրում է ԱԺ-ում կայուն մեծամասնության շեմի նվազեցումը՝ 54%-ից 52%:

«Ոստիկանության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-492-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 15.02.2026թ.)

- Օրենսդրական փաթեթով նախատեսվում է ՀՀ ներքին գործերի նախարարության կազմում Օպերատիվ կառավարման գրասենյակի ստեղծում: Արդյունքում տարբեր իրավախախտումների, արտակարգ իրավիճակների և պատահարների վերաբերյալ ահազանգերը քաղաքացիներից կընդունվեն և կսպասարկվեն միատեսակ մոտեցմամբ: Ահազանգերի ընդունման համար կգործարկվի «112» հեռախոսահամարը, որի ներքո կմիավորվեն երկու մարմինների՝ Ոստիկանության և Փրկարար ծառայության հեռախոսահամարները («1-02», «1-01», «911»):

*Սույն բաժինը ներառում է այն օրենքները, որոնք ընդունվել են ավելի վաղ, սակայն ուժի մեջ են մտնում փետրվար ամսին: Փետրվար ամսին ընդունված և նույն ամսին ուժի մեջ մտած օրենքները ներկայացված են տեղեկագրի առաջին բաժնում և չեն կրկնվում սույն բաժնում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Մեկուսացման և օբսերվացիայի իրականացման կարգը սահմանելու մասին (N 151–Ն, ընդունված՝ 12.02.2026թ., ուժի մեջ՝ 14.02.2026թ.)

- «Հանրային առողջապահության մասին» օրենքի ընդունման լույսի ներքո անհրաժեշտություն է առաջացել սահմանել օբսերվացիայի և մեկուսացման կարգը և այն բերել օրենսդրական դաշտ՝ հաշվի առնելով համաճարակի հիմով արտակարգ իրավիճակի ռեժիմի սահմանման խիստ պայմանները:
- Որոշումն ամրագրում է այն ելակետային կարգավորումները, որոնք ընթացակարգային առումով սահմանում են մեկուսացման և օբսերվացիայի բնականոն ընթացքի չափանիշները:

Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանում գրանցված զբոսաշրջային ծառայություններ մատուցողների տեղեկատվության բովանդակությունը, ներկայացման և վարման կարգն ու ձևերը սահմանելու մասին (N 136–Ն, ընդունված՝ 12.02.2026թ., ուժի մեջ՝ 01.07.2026թ.)

- Որոշմամբ սահմանվում է զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանի տեղեկատվության բովանդակությունը, ինչպես նաև այդ տեղեկատվության ներկայացման և վարման կարգը: Որոշումը կարգավորում է, թե ինչ տվյալներ պետք է ներկայացնեն զբոսաշրջային ծառայություն մատուցող իրավաբանական և ֆիզիկական անձինք, ինչ տեղեկություններ են հրապարակման ենթակա, ինչպես են դրանք մուտքագրվում, փոփոխվում և պահպանվում:
- Նախատեսվում է, որ գրանցամատյանը կվարվի Զբոսաշրջության կոմիտեի կողմից՝ թվային հարթակի միջոցով, կներառի ծառայություն մատուցողների վերաբերյալ հիմնական և լրացուցիչ տվյալներ (անվանում, գրանցման տվյալներ, գործունեության տեսակ, հասցե, կապի միջոցներ և այլն), ինչպես նաև տեղեկություններ գործունեության կասեցման կամ դադարեցման մասին: Սահմանվում են նաև տվյալների փոխանակման, հասանելիության, անվտանգության և հրապարակայնության կանոնները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի N 1584-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (N 212–Ն, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 28.02.2026թ.)

- Որոշմամբ սահմանվում է, որ Օրենքով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունների ստացման դիմումը և դրա հիման վրա
- տեղեկությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ստեղծված էլեկտրոնային հարթակի միջոցով, որի նկարագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:

ՀՀ-ում արագ արձագանքման բժշկական խումբ ստեղծելու, դրա կառուցվածքը, կազմը, գործունեության համար անհրաժեշտ միջոցների ցանկը, ինչպես նաև ՀՀ-ի տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ներգրավվելու կարգը սահմանելու մասին (N 147–Ն, ընդունված՝ 12.02.2026թ., ուժի մեջ՝ 22.02.2026թ.)

- Որոշմամբ ստեղծվում է ՀՀ-ում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժաշխատողների և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության մասնագետների ներգրավմամբ ՀՀ ԱԱԲԽ–ն, որը ներգրավվելու է ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների ժամանակ տուժածներին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու աշխատանքներին և ՀՀ տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին:
- Նրանց աշխատակարգը, տարբեր առաքելություններին ներգրավվելու կարգը և այլ վերաբերելի հարցեր կարգավորվում են որոշման հավելվածներով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 1531-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (N 146–Ն, ընդունված՝ 12.02.2026թ., ուժի մեջ՝ 13.02.2026թ.)

- ՔԿԱԳ ոլորտում նախատեսվող բարեփոխումների արդյունքում փոխվում է սպասարկման կենտրոնների կազմակերպական մոդելը. դրանք այլևս չեն գործելու համայնքային համակարգում, այլ ընդգրկվելու են ՔԿԱԳ գործակալության կազմում, իսկ աշխատակիցները կդառնան պետական քաղաքացիական ծառայողներ:
- Այս փոփոխությունների պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ուժը կորցրած ճանաչել վերոնշյալ որոշումը, քանի որ այն կարգավորում էր համայնքային համակարգում գործող սպասարկման կենտրոնների և դրանց մասնագետների գործունեությանն առնչվող հարաբերությունները:

ՀՀ պողպատե ամրանների ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին (N 115–Ն, ընդունված՝ 05.02.2026թ., ուժի մեջ՝ 11.02.2026թ.)

- 2025 թվականի հուլիսի 16-ին ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-232-Ն օրենքը, համաձայն որի՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7214 և 7215 ապրանքային դիրքերում դասակարգվող՝ երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի ներմուծման լիցենզիայի տրամադրման համար սահմանվել է պետական տուրք՝ բազային տուրքի 29-ապատիկի չափով:
- Միաժամանակ, նշված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ, անկախ ներկրման գործընթացի փաստացի արդյունքներից:
- 2025 թվականի նոյեմբերի 13-ին ընդունվել է «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որով վերանայվել է ներմուծման լիցենզիայի տրամադրման համար սահմանվել է պետական տուրքի դրույքաչափը՝ սահմանվելով բազային տուրքի 45-ապատիկի չափով: 2025 թվականի օգոստոսի 7-ին Կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետություն պողպատե ամրանների ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» N 1077-Ն որոշումը, որն ուժի մեջ է միջև 2026 թվականի փետրվարի 11-ը:
- ԵՏՄ կարգավորումներին համապատասխան, նման կարգավորումները ազգային օրենսդրությամբ կարող են սահմանվել 6 ամսվա համար, ուստի կարգավորման ազդեցության արդյունավետության ապահովման նպատակով ընդունվել է համանման որոշում, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 11-ից և գործում է մինչև 2026 թվականի օգոստոսի 11-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1067-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (N 140–Ն, ընդունված՝ 12.02.2026թ., ուժի մեջ՝ 13.02.2026թ.)

- Կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի «Սոցիալական ծախսերի տեսակների առանձին ուղղությունները, ընտանիքի անդամների շրջանակը և սոցիալական ծախսերի փոխհատուցման առավելագույն չափերը սահմանելու մասին» N 1067-Ն որոշմամբ սահմանված է, որ սոցիալական ծախսերի փոխհատուցման իրավունքը ծագում է, եթե ֆիզիկական անձը հարկային մարմին է ներկայացրել եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը):
- Հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխան՝ հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը հայտարարատու ֆիզիկական անձի կողմից փոփոխությունների չենթարկվելու դեպքում համարվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված, իսկ սոցիալական ծախսը ֆիզիկական անձին փոխհատուցվում է, եթե վերջինս օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը):
- Որաշման դրույթները համապատասխանեցվում են օրենսգրքում կատարված փոփոխություններին, սահմանելով, որ սոցիալական ծախսերի փոխհատուցման իրավունքը ծագում է, եթե ֆիզիկական անձն օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 4-ի N 1264-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (N 171–Ն, ընդունված՝ 19.02.2026թ., ուժի մեջ՝ 21.02.2026թ.)

- Կառավարության 04.09.2025թ. N 1264-Ն որոշման հավելվածով սահմանվել է, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքները սեփական կարիքների համար օգտագործման դեպքում այդ ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմնի միասնական շտեմարան փոխանցվում է դրոշմավորման ազգային օպերատորի մշակած և պետական եկամուտների կոմիտեի հետ համաձայնեցված բջջային հավելվածով:
- Միաժամանակ, Կառավարության 04.09.2025թ. N 1276-Ն որոշման հավելվածով մինչև հաշվարկային փաստաթուղթն ստորագրելը (վավերացնելը) հաշվարկային փաստաթղթով մատակարարված դրոշմավորված ապրանքն ստացողի կողմից վերջնական սպառման ենթակա լինելու դեպքում ստացողը կարող է կատարել «Ապրանքը նախատեսված է վերջնական սպառման համար» նշում, որից հետո հաշվարկային փաստաթղթում ներառված ապրանքների դրոշմավորման ծածկագրերն ինքնաշխատ եղանակով ստանում են «Շրջանառությունից հանված» կարգավիճակ:
- Ըստ այդմ, Կառավարության 04.09.2025թ. N 1264-Ն որոշման մեջ հստակեցվել է, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմնի միասնական շտեմարան կարող է փոխանցվել նաև e-invoicing համակարգով:

ՀՀ-ից արտահանման և ՀՀ ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը սահմանելու մասին (N 154–Ն, ընդունված՝ 19.02.2026թ., ուժի մեջ՝ 23.02.2026թ.)

- Կառավարության 2025 թվականի օգոստոսի 7-ի N 1071-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ-ից արտահանման և ՀՀ ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի (ապրանքների) ցանկը, որն ուժի մեջ է մտել 2025 թվականի օգոստոսի 16-ից՝ վեց ամիս ժամկետով:
- Որոշմամբ սահմանվում է սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը, որոնց արտահանումը և ներմուծումը արգելվում է վեց ամիս ժամկետով: Արգելքը չի տարածվում սնդիկի հավելիչով այն արտադրանքի (ապրանքների) վրա, որոնց մաքսային ընթացակարգով ձևակերպման ժամանակ առկա է ներմուծողի կամ արտահանողի կողմից կազմված և հաստատված գրավոր հայտարարությունը՝ քաղաքացիական պաշտպանության, ռազմական, հետազոտությունների, սարքերի չափաբերման և որպես չափանմուշ (էտալոն) օգտագործման նպատակով արտադրանքի անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև և «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների վրա:
- Որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 23-ից և գործում է վեց ամիս ժամկետով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 895 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին (N 208–Ն, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 28.02.2026թ.)

- «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2025 թվականի մարտի 26-ի ՀՕ-46-Ն, «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի մարտի 26-ի ՀՕ-49-Ն, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2025 թվականի մարտի 26-ի ՀՕ-50-Ն օրենքներին համապատասխան՝ խաղային բնագավառի գործունեության կարգավորման ոլորտում խաղային բնագավառի գործունեությանը վերաբերող իրավական ակտերի մշակումը, ինչպես նաև այդ բնագավառում նոր գործիքների ու տեխնոլոգիաների ուսումնասիրությունն ու ներդրումը, խաղային գործունեության կարգավորման ապահովումը, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց լիցենզավորումը, լիցենզիայի պահանջների կատարման մասով վարչարարության իրականացումը վերապահված է Էկոնոմիկայի նախարարությանը:
- Դրան համապատասխան փոփոխություններ են կաաարվել «Լիցենզավորման մասին» օրենքի կիրարկումն ապահովող որոշման մեջ, որով վերոնշյալ լրազորությունները վերապահված են ֆինանսների նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի N 864-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին (N 210–Ն, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 28.02.2026թ.)

- Կառավարության 01.06.2023թ. N864-Ն որոշմամբ սահմանված են միասնական հաշվում կամ վարչական ակտի միասնական հաշվում առկա գումարների վերադարձը հարկային մարմին ներկայացված այլ հաշվին իրականացնելու դեպքերը և կարգը: Նշված որոշամբ սահմանված դեպքերը վերաբերում են կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների միասնական հաշիվներում առկա գումարների վերադարձին, մինչդեռ հնարավոր են դեպքեր, երբ վերադարձման ենթակա գումարներ են լինում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց միասնական հաշիվներում (օրինակ՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող անձանց դեպքում սոցիալական ծախսի փոխհատուցման գումարները):
- Որոշմամբ սահմանվում է, որ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց դեպքում գումարների վերադարձն իրականացվում է վերջիններիս անձնագրային տվյալներով բացված բանկային հաշիվներին, բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված հատուկ բանկային հաշիվների:

Եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա նվազեցվող (չհարկվող) եկամուտների տեսակներ կամ շեմեր սահմանելու մասին (N 225–Ն, նախագիծը, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 28.02.2026թ.)

- Հարկային օրենսգրքում 2025թ. կատարված փոփոխություններով սահմանվել է, որ հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Սահմանվել է նաև, որ եկամտային հարկի հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները, քույրերը, եղբայրները, զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), պապերը, տատերը և թոռները: Միաժամանակ, սահմանվել է, որ Կառավարությունը իրավասու է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա այլ եկամուտների տեսակներ կամ շեմեր: Ըստ այդմ սահմանվել են հայտարարագրման ոչ ենթակա նվազեցվող *(չհարկվող)* եկամուտների տեսակներ և շեմեր.
- ստացվող վարկերի գումարները, բացառությամբ պարտատիրոջ կողմից վարկի գումարների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության դեպքերի *(*այդ թվում՝ օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալու պահին*)*,
- ընտանիքի անդամ չհամարվող ֆիզիկական անձանցից մինչև 1 միլիոն դրամը ներառյալ միանվագ ստացվող փոխառությունների գումարները, բացառությամբ պարտատիրոջ կողմից փոխառության գումարների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության դեպքերի *(*այդ թվում՝ օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալու պահին*)*,
- *ՀՀ* ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները, ինչպես նաև պետական պարգևները *(*մրցանակները*)*,
- գործատուի կողմից առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրավճարները՝ եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև *10* հազար դրամի չափով, ինչպես նաև «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով սահմանված՝ առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում ֆիզիկական անձանց կամ նրանց փոխկապակցված անձանց համար *(*օգտին*)* կատարվող ապահովագրավճարները,
- մրցույթներում ստացվող դրամական և իրային մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում 50 հազար դրամը չգերազանցող չափով,
- օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ընտանիքի անդամ չհամարվող ֆիզիկական անձանցից, մինչև 1 մլն *ՀՀ* դրամը ներառյալ արժեքով ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները,
- ոչ առևտրային կազմակերպություններից մինչև 1 մլն դրամը ներառյալ չափով անհատույց ստացվող ակտիվները, աշխատանքները, ծառայությունները,
- սեփականության իրավունքով ֆիզիկական անձին պատկանող գույքի օտարումից ընտանիքի անդամ չհամարվող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից մինչև 1 մլն դրամը ներառյալ ստացվող եկամուտները, բացառությամբ հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումից ստացվող եկամուտների:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու մասին (N 133–Ա, ընդունված՝ 12.02.2026թ., ուժի մեջ՝ 13.02.2026թ.)

- Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսել բանկային և հարակից գաղտնիք պարունակող տեղեկատվություն ստանալու մասին դատարանի որոշման և բանկային և հարակից գաղտնիք պարունակող տեղեկատվության տրամադրումը իրականացնել էլեկտրոնային եղանակով:

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում պահպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության որոնում իրականացնելու հնարավորություն ընձեռող ծառայության մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին (N 207–Ա, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 27.02.2026թ.)

- Համաձայնագրով սահմանվում է, որ որոնման ծառայության ստեղծումն ու գործունեության ապահովումն իրականացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, և այն տեղադրվում է ԵՏՄ-ի տեղեկատվական պորտալում:
- Ծառայության արդյունավետ աշխատանքը ապահովելու նպատակով տեղեկատվության փոխանակումն իրականացվում է կանոնավոր հիմունքով՝ ԵՏՄ-ի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցով: Այս շրջանակում ձևավորվում է ընդհանուր տեղեկատվական ռեսուրս, որը պարունակում է անդամ պետություններում պահպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտների վերաբերյալ տվյալներ:
- Տեղեկատվության որոնումը կատարվում է որոնման ծառայությանը ներկայացվող դիմումի՝ որոնման հարցման միջոցով: Հարցումը ստանալուց հետո ծառայությունն իրականացնում է դրա մշակումը և տեղեկատվական պորտալում գեներացնում որոնման արդյունքները:
- Ծառայությունը հանրամատչելի է, իսկ արդյունաբերական սեփականության օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության որոնումն իրականացվում է անհատույց հիմունքով:
- Բացի այդ, ամրագրվում է անդամ պետությունների լիազորված մարմինների սահմանումը և նրանց պարտավորությունը՝ ապահովելու փոխանցվող տեղեկատվության ամբողջականությունը, հավաստիությունն ու արդիականությունը:

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների վերահսկման շրջանակներում ընդունվող որոշումները, ինչպես նաև այդ վերահսկման շրջանակներում Հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) Եվրասիական տնտեսական միության դատարանում բողոքարկելու մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին (N 200–Ա, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 27.02.2026թ.)

- Նախատեսվում է, որ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին գործի վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումը, մրցակցության ոլորտում Հանձնաժողովի գործողությունը (անգործությունը) վիճարկելու մասին դիմումով կարող է Եվրասիական տնտեսական միության դատարան դիմել այն ֆիզիկական անձը (այդ թվում՝ պաշտոնատար անձը), որի վերաբերյալ կայացվել է նման որոշում կամ որի իրավունքները և օրինական շահերը ուղղակիորեն շոշափվել են նման գործողությամբ (անգործությամբ):
- Դիմումը կարող է Դատարան ներկայացվել՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին գործի վերաբերյալ Հանձնաժողովի վիճարկվող որոշումը «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում պաշտոնական հրապարակման օրվանից 3 ամսվա ընթացքում, իսկ Հանձնաժողովի գործողությունը (անգործությունը) վիճարկելու դեպքում՝ 3 ամսվա ընթացքում՝ այն օրվանից հետո, երբ դիմումատուին հայտնի է դարձել Հանձնաժողովի կողմից վիճարկվող գործողություն (անգործություն) կատարվելու մասին:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 218–Ա, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 27.02.2026թ.)

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվում են փոփոխություններ՝ ապահովվելու բազմաբնակարան շենքից բնակարան գնող սեփականատերերի իրավունքները, մասնավորապես՝ Նախագծերով առաջարկվում է շենքի տակ գտնվող հողամասի սեփականության իրավունքը վիճարկելու դեպքերում մինչև վեճի լուծումը հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների համապատասխան բաժնային մասի նկատմամբ օրենքի ուժով երաշխավորել գնորդների գույքային իրավունքները:
- Փոփոխություններով սահմանվում է, որ եթե առկա է դատական գործ, որտեղ պետությունը կամ համայնքը վիճարկում է բազմաբնակարան շենքի տակ գտնվող հողամասի սեփականության իրավունքը, այնուամենայնիվ բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի գնորդը կարող է ձեռք բերել իր բնակարանի սեփականության իրավունքը: Դատական գործի ընթացքում Կառավարությունը կարող է սահմանել հողամասի հատուկ սխեմա, որի շրջանակում սեփականատերը, կառուցապատողը, գրավառուն և այլ իրավունք ունեցող անձինք կարող են ամբողջ ծավալով իրականացնել իրենց իրավունքները, հնարավոր է ստանալ քաղաքաշինական փաստաթղթեր, բնակարանների գնորդներին կարող է փոխանցվել ընդհանուր հողամասի բաժնային սեփականության իրավունքը:
- Եթե մինչև սխեմայի սահմանումը գնորդն արդեն ուներ հողամասի օգտագործման իրավունք, ապա սխեմա սահմանելուց հետո այդ հողամասի նկատմամբ նրան օրենքի ուժով փոխանցվում է սեփականության իրավունք (ընդհանուր բաժնային): Եթե դատական գործի ավարտին հողամասի սեփականության սուբյեկտը չի փոխվում, ապա բնակարանի սեփականատիրոջը օրենքի ուժով փոխանցվում է հողամասի համապատասխան բաժնի սեփականության իրավունքը: Եթե այնուամենայնիվ դատական գործի ավարտին հողամասը հանձնվում է պետության կամ համայնքի սեփականությանը, ապա Կառավարության սահմանած սխեմայի շրջանակում շենքի պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքը օրենքի ուժով փոխանցվում է բնակարանների սեփականատերերին՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, սակայն պահպանվում են հողամասի նկատմամբ մինչ դատական ակտը գրանցված իրավունքները:
- Փոփոխություններով նախատեսվում է նոև, որ դատական գործի առկայությունը հողամասի վիճարկման վերաբերյալ արգելք չի հանդիսանում կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի պայմանագիր կնքելու և կառուցված շենքում սեփականության փոխանցման ակտ կնքելու համար: Սակայն այսպիսի պայմաններում գնորդը պետք է տեղեկացված լինի, որ հողամասի վերաբերյալ առկա է դատական գործ՝ այդպիսի դրույթ ներառելու կամ պայմանագրի պայմաններում, կամ փոխանցման ակտում:
- Միաժամանակ, նախատեսվում են փոփոխություններ հարակից օրենքներում, ինչպիսիք են՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքը և «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքը:

«Ներդրումների մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 158–Ա, ընդունված՝ 19.02.2026թ., ուժի մեջ՝ 20.02.2026թ.)

- Օրենքի նախագիծը կոչված է բարելավվելու ՀՀ ներդրումային միջավայրը՝ այն հստակեցնելով և համապատասխանեցնելով միջազգային նորմերին:
- Օրենքի նախագիծը սահմանում է ներդրումների և ներդրողների պաշտպանության ժամանակակից, միջազգային ստանդարտներին համապատասխան երաշխիքներ: Մասնավորապես՝ նախատեսվում են խտրականության բացառման երաշխիքներ, ինչպես նաև ներդրումների իրավական և ֆիզիկական պաշտպանվածություն, իրավական դաշտի թափանցիկություն և կայունություն: Սահմանվում է նաև, որ երաշխիքները փոփոխվելու կամ վերացվելու դեպքում ներդրումները պահպանելու են պաշտպանությունը ևս հինգ տարի: Նախատեսվում են նաև կապիտալի ազատ տեղաշարժի, գույքային իրավունքների, աշխատողների ներգրավման և վեճերի լուծման երաշխիքներ:
- Նախագիծը սահմանում է նաև ներդրումային խթանների տեսակներն ու տրամադրման մեխանիզմները՝ թույլատրելով դրանք տրամադրել ոչ միայն օրենքով կամ կառավարության որոշմամբ, այլև ներդրումային պայմանագրերով, որոնց հիմնական պայմանները կսահմանվեն կառավարության կողմից:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 119–Ա, ընդունված՝ 05.02.2026թ., ուժի մեջ՝ 06.02.2026թ.)

- Նախագծերի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ հարկային օրենսգրքի կիրառման ընթացքում առաջացած հարցերի կանոնակարգման և հստակեցման, առանձին իրավական նորմերի վերանայման, դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությամբ:
- Վերանայվել է արտարժույթով արտահայտված գործարքների և գործառնությունների հաշվառման կանոնները, նախատեսելով հետևյալը՝
  1. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով (բացառությամբ ներմուծման և արտահանման գործարքների) հարկման բազաների, եկամուտների և ձեռքբերման արժեքների որոշման համար հիմք ընդունել օրենսգրքով սահմանված հաշվառման մեթոդին համապատասխան դրանց համար հաշվառման ամսաթվի դրությամբ ԿԲ հրապարակած միջին փոխարժեքը,
  2. արտարժույթի փոխանակման գործարքների մասով եկամուտների և ծախսերի հաշվարկը կատարել արտարժույթի փոխանակման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ձևավորված միջին փոխարժեքից,
  3. տրամադրված կամ ստացված կանխավճարների մասով առաջացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սկզբնական արժեքների որոշման համար հիմք ընդունել դրանց առաջացման ամսաթվի դրությամբ միջին փոխարժեքը,
  4. միաժամանակ, որպես տվյալ օրվա ԿԲ հրապարակած՝ միջին փոխարժեք հիմք է ընդունվում ԿԲ կողմից նախորդ աշխատանքային օրը հրապարակված միջին փոխարժեքը, իսկ արտարժույթի փոխանական գործարքների մասով՝ ԿԲ կողմից այդ օրը հրապարակված միջին փոխարժեքը:
- Կանոնակարգվել է ապրանքի վերադարձի դեպքում գործարքի ճշգրտման հետ կապված հարցերը և գործարքի ճշգրտման հնարավորություն է նախատեսվել ապրանքի վերադարձի այն բոլոր դեպքերի համար, երբ գործարքի առարկա հանդիսացող ապրանքը ենթակա է վերադարձման: Ներմայումս վերադարձի դեպքում գործարքի ճշգրտման հնարավորություն նախատեսված է միայն պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների համար և այն դեպքերի համար, երբ ապրանքների ընդունման պահին պարզվում է, որ ապրանքը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պայմաններին և այն ենթակա է վերադարձման:
- Կանոնակարգվել են հարկային հաշիվներից բացի այլ հաշվարկային փաստաթղթերով (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններով) ձեռքբերումների վերադարձի մասով գործարքների ճշգրտման դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորություններն արտացոլելու հարցերը՝ նախատեսելով, որ ճշգրտումները արտացոլվում են ճշգրտման ժամանակաշրջանի համար ներկայացվող միասնական հաշվարկում, բացառությամբ՝ հարկի գումարների ավելացման դեպքերի, որոնք պետք է արտացոլվեն մատակարարումների օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի միասնական հաշվարկում:
- Վաղեմության ժամկետով (գործարքի կատարման տարվան հաջորդող 3 տարի) պայմանավորված սահմանափակումը կիրառվելու է նաև դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի չեղարկման մասով:
- Հստակեցվել են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող հարկ վճարողների կողմից մինչև ԱԱՀ շեմը (115 մլն դրամ) ԱԱՀ-ի պարտավորությունների կատարմանը վերաբերող հարցերը: Նախատեսվում է սահմանել, որ՝
  1. գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ են համարվում օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գյուղատնտեսական արտադրանք արտադրողները,
  2. գյուղատնտեսական արտադրանք արտադրողները այդ արտադրանքի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ չեն հաշվարկելու և վճարելու, իսկ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով՝ հաշվարկելու և վճարելու են ԱԱՀ:
- Փոփոխվել են ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում իրականացված՝ գործարքների ու գործառնությունների գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունների կատարմանը վերաբերող դրույթները, սահմանվել է, որ այդ ռեզիդենտ կազմակերպությունը պետք է հաշվարկի ու վճարի ԱԱՀ՝ ՀՀ-ում իրականացվող գործարքների մասով, եթե գործարքի կողմը ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպություն է և անհատ ձեռնարկատեր: Միաժամանակ, մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման համար կիրառվելու են նույն կարգավորումները՝ հաշվետու ժամանակաշրջանի, հարկի վճարման ու հարկային հաշվարկների ներկայացման ժամկետների առումով:

- Հստակեցվել են ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոնի և ԱԱՀ-ից ազատման արտոնությունների հետ կապված հարցերը՝
  1. պետական տուրքի մասով ԱԱՀ-ից ազատման արտոնությունը հավասարապես կիրառելի է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բացի այլ հարկ վճարողների կողմից ևս մատուցվող ծառայությունների մասով,
  2. ԱԱՀ-ից ազատման արտոնություն կիրառել նաև համայնքներին նվիրատվությամբ ապրանքների մատակարարման մասով (ներկայումս ԱԱՀ-ից ազատվում է միայն պետությանը նվիրատվությունը, համայնքների նվիրատվության դեպքում ԱԱՀ-ից չի ազատվում և ՀՀ կառավարության 12.01.2018թ. N402-Ն որոշմամբ հարկման բազան 0 դրամ է):
- Վերանայվել են ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար ակցիզային հարկի գումարները մաքսային մարմիններին վճարելու հետ կապված դրույթը և նախատեսել, որ այդ գումարները ևս պետական բյուջե պետք է վճարվեն մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:
- Սահմանվում է, որ շահութահարկ վճարողի կողմից իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների ոչ միայն տեղաբաշխման (որը վերաբերում է բաժնետիրական ընկերություններին), այլ նաև օտարման (որը վերաբերում է մասնավորապես՝ ՍՊԸ-ներին) դեպքում տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը եկամուտ չի համարվում:
- Հստակեցվել են տոկոսների մասով եկամտի հաշվեգրման կարգավորումները՝ սահմանելով հայեցողություն տոկոսների տեսքով եկամտի հաշվեգրման մասով՝ նախատեսելով, որ տոկոսների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված կամ տոկոսների հաշվարկման ամեն օրվա դրությամբ կամ պարտքի ժամկետը լրանալու պահից:
- Վերանայվել է ինքնավար էներգաարտադրողների կողմից ներտնտեսական նպատակներով օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրության հետ կապված ծախսերի նվազեցումը սահմանափակող դրույթը: Սահմանվում է, որ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հավասար փոխհոսքերի տեսքով ստացվող էլեկտրական էներգիայի սկզբնական արժեքը որոշումն է ինքնավար էներգաարտադրողի կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի արտադրության համար կատարված ծախսերի չափով:
- Հստակեցվում են արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ԿԲ հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում ստացվող եկամուտների և ծախսերի հաշվառման կարգավորումները:
- Վերանայվել են դրոշմավորման ենթակա կաթնամթերքի գծով որակական կորուստների՝ համախառն եկամտից նվազեցման նորման՝ սահմանելով, որ նշված կորուստը համախառն եկամտից ենթակա է նվազեցման համախառն եկամտի 2%-ը չգերազանցող չափով:
- Վերանայվում են դրամարկղային մեթոդով ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց եկամուտների հաշվառման կարգավորումները, մասնավորապես՝ ֆիզիկական անձանց մասով դրամարկղային մեթոդը մոտարկելով ոչ ռեզիդենտի համար սահմանված կարգավորումներին:
- Ուժը կորցրած են ճանաչվում ենթաակցիզային ապրանքների օտարման համար օրենսգրքով սահմանված նվազագույն գների կարգավորումները:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 197–Ա, ընդունված՝ 26.02.2026թ., ուժի մեջ՝ 27.02.2026թ.)

- Նախագիծը նպատակ ունի որոշակիացնել մաքսային ստուգումների իրականացման գործընթացը, հստակեցնել մաքսային ստուգումների գծով չկարգավորված հարաբերությունները, ամրագրել մաքսային ստուգմանը վերաբերող փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ծանուցման դրույթները, վերանայել պատասխանատվության նորմերը մաքսային ստուգման արդյունքներով հայտնաբերված իրավախախտումների համար: «Մաքսային կարգավորման մասին» օրենքում նախագծով առաջարկվում է՝
- սահմանել, որ կամերալ ստուգման ժամկետը չի կարող գերազանցել 40 աշխատանքային օրը, կամերալ ստուգման սկսելու մասին ստուգման ենթակա անձը պետք է ծանուցվի.
- հանել կամերալ մաքսային ուսումնասիրության տեսակը, որը կրկնում է մաքսային հսկողության ձևերը.
- սահմանել ստուգման ժամկետի կասեցման վերացման դեպքերը, ինչպես նաև գործնականում հանդիպած և հարկային օրենսգրքով սահմանված կասեցման հիմքերի համանմանությամբ սահմանել նաև մաքսային ստուգման ժամկետի կասեցման համապատասխան հիմքեր.
- սահմանել մաքսային ստուգման ակտի վերաբերյալ ստուգվող անձի կողմից առարկություններ ներկայացնելու ժամկետ.

- սահմանել ստուգման արդյունքների ամփոփման հիման վրա՝ մաքսային մարմնի կողմից կայացվող որոշումների տեսակները
- սահմանել և հստակեցնել մաքսային ստուգմանն առնչվող փաստաթղթերի ծանուցման եղանակները: Մասնավորապես՝ որպես ծանուցման եղանակներ սահմանվել են՝ առձեռն եղանակը, էլեկտրոնային փոստը, փոստային կապը և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգը: Ընդ որում, հարկային մարմինների հետ իրականացվող բացառապես փաստաթղթաշրջանառությանը համանման մաքսային ստուգումների մասով նույնպես նախատեսվել է տվյալ ծանուցման էլեկտրոնային եղանակը.
- վերացնել մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող առանձին անձանց համար կրկնվող պահանջները.
- սահմանել պատասխանատվություն մաքսային ստուգման արդյունքում հայտնաբերված իրավախախտումների համար՝ կազմակերպությունների նկատմամբ: Այսպես, բացի պակաս հաշվարկված հարկերի գումարների և տուժերի գումարների, գանձվելու է նաև չհաշվարկված կամ պակաս հաշվարկված ընդհանուր գումարների 20 տոկոսի չափով տուգանք, բացառությամբ պայմանական բաց թողնված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները բաց թողնելու պայմանի խախտման դեպքերի, երբ տուգանքը հաշվարկվելու է 50 տոկոսի չափով:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են առաջին ընթերցմամբ:

Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին օրենք և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նոր օրենքով կկարգավորվեն ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց իրավական վիճակին առնչվող իրավահարաբերությունները:
- Մասնավորապես, սահմանվում են քննարկվող օրենքի իմաստով անհայտ կորած անձի հասկացությունը, իրավական կարգավիճակը, անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության, անհայտ կորած անձանց որոնման, հայտնաբերման և վերադարձման հետ կապված հարաբերությունները, անհայտ կորած անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների իրավունքները, այդ թվում՝ անհայտ կորած անձի անհետացման պատճառների և հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություններ ստանալու, սոցիալական պաշտպանության իրավունքը, իրենց նախաձեռնությամբ և լիազոր մարմնի համաձայնությամբ, լիազոր մարմնին անհայտ կորած անձանց հետախուզման գործընթացում օգնություն և աջակցություն ցուցաբերելու իրավունքը և այլն:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Սահմանվում է «մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի» նոր հասկացությունը և փաստացի արգելվում են գրեթե բոլոր պլաստիկ տոպրակները՝ բացառությամբ կշռափաթեթավորման համար նախատեսված պարկերի և երկրորդային հումքից արտադրված աղբի պարկերի:
- Արգելքը վերաբերելու է ոչ միայն վաճառքին, այլև նման արտադրանքի առկայությանը կամ ցանկացած ձևով օտարմանը, այդ թվում՝ անվճար տրամադրմանը:
- Սահմանափակումը տարածվում է նաև մեկանգամյա օգտագործման պլաստիկ սպասքի ու տարաների որոշ տեսակների վրա, ինչպիսիք են ափսեները, բաժակները, խառնելու ձողիկները և սննդի տարաները՝ որոշ բացառություններով: Այս արգելքների մի մասը ուժի մեջ կմտնի 2027 թվականի հունվարի 1-ից:
- ՎԻՎՕ-ում ներմուծվում է նոր կարգավորում, որով թիրախային խմբի ապրանքների առկայությունը կամ օտարումը առանձին իրավախախտում է: Պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանվում են տուգանքներ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 150-ապատիկի չափով, իսկ առաջին խախտման դեպքում կիրառվում է նախազգուշացում: Խախտումների գործերով լիազոր մարմին է ոչ միայն համայնքը, այլև Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:
- «Շուկայի վերահսկողության մասին» օրենքով սահմանվուկմ է «դիտարկումը» որպես վերահսկողական գործիք: Շուկայի վերահսկողության տեսչական մարմինն այն կարող է իրականացնել առանց նախնական ծանուցման՝ մինչև 5 աշխատանքային օր տևողությամբ՝ արձանագրությամբ, բացատրություններով ու կարգադրագրով: Դիտարկմամբ վերահսկողությունն իրականացվում է 2 հիմնական ոլորտներում՝ մեկանգամյա օգտագործման պլաստիկի արգելքներ և ծխախոտային արտադրատեսակների ու դրանց փոխարինիչների առևտրի, փաթեթավորման, գովազդի կամ հովանավորության ու վաճառքի սահմանափակումներ: «Շուկայի վերահսկողության մասին» օրենքի կարգավորման շրջանակներում է ներառվում նաև զբոսաշրջությունը:

«Հարկային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է հարկային և մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնողների մասով նշանակման պայմաններից հանել վերապատրաստում անցած լինելու վերաբերյալ պայմանը: Միաժամանակ, որպես պաշտոնի նշանակման առանձին պայման նախատեսվել է գործառութային առանձնահատկություններով պայմանավորված հարկային/մաքսային ծառայողի կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով ծառայողական առաջխաղացման իրավունք ունենալը:

ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերով նախատեսված հողամասերը՝ բացառապես նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխմամբ պայմանավորված 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկից դուրս գալու դեպքում, կարող են օտարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց նախկինում պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին Կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություն կատարելու՝ համայնքի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ հողամասը սահմանված հողամասերի ցանկում այլևս ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով: Այդ դեպքում ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու գործընթացը չեղարկվում է:
- Ինչպես նաև նախատեսվում է, որ ավագանու անդամի կողմից եռօրյա ժամկետում հրաժարականի դիմումը հետ չվերցնելու դեպքում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է երկարատև բժշկական օգնության և սպասարկման կարիք ունեցող դատապարտյալներին տեղափոխել այն քրեակատարողական հիմնարկ, որտեղ տեղակայված է համապատասխան կարողություններով մասնագիտացված բժշկական ստորաբաժանումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է դատարաններում սահմանել քաղաքացիական և վարչական գործերի քննության հստակ 6ամսյա ժամկետ, սակայն կպահպանվի ժամկետների երկարաձգման ինստիտուտը՝ միայն պատճառաբանված դատական ակտով՝ քաղաքացիական դատավարությունում 3ամսյա, իսկ վարչական դատավարությունում 6ամսյա ժամկետներով:
- Միաժամանակ կսահմանվեն նաև սահմանափակումներ, օրինակ՝ սնանկության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և այլ վարույթներով:
- Նախատեսվում է նաև ուժը կորցրած ճանաչել այն դրույթը, որը հնարավորություն է տալիս դատարանին նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոքը մերժել, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով հիմնավորվել է անձի իրավունքի խախտման փաստը:
- Նախատեսվում է նաև, որ եթե ՀՀ միջազգային պայմանագրերով վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտած վճռով հիմնավորվել է անձի իրավունքի խախտումը, ապա քրեական դատավարության կարգով բացառիկ բողոքարկման իրավունքը չի կարող սահմանափակվել ելքի վրա ազդեցություն չունենալու հիմքով:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է սահմանել, որ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է նաև յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ-ն:

ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է ՀԱՍԵ-ին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) առանց մրցույթի, պետության և համայնքների սեփականության հողերի անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու փոխարեն տրամադրել անհատույց օգտագործման իրավունքով

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Էլեկտրոնային առևտրի կարգավորման նպատակով ԵՏՄ անդամ պետությունների կողմից ստորագրվել է «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» 25.12.2023թ. արձանագրությունը, որով նախատեսվել է կանոնակարգել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից էլեկտրոնային առևտրի շրջանակներում ձեռքբերված ապրանքների՝ ԵՏՄ մաքսային տարածք ներմուծման և հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:
- Էլեկտրոնային առևտրի ապրանքների հայտարարագրման նպատակով ներդրվում է էլեկտրոնային առևտրի օպերատորի ինստիտուտը, սահմանվում են օպերատորին ներկայացվող պահանջներն ու չափանիշները, օպերատորի գործունեության պայմանները:
- Օտարերկրյա էլեկտրոնային հարթակներից անձանց կողմից ձեռք բերվող ապրանքների տարանջատում այլ ապրանքներից, այդ ապրանքների հայտարարագրման պարզեցված կարգավորումներ առանձին մաքսային ընթացակարգերով:
- Էլեկտրոնային առևտրի ապրանքների մատակարարման երկու ուղղությունների առանձնացում՝
  1. ուղիղ մատակարարումներ (ֆիզիկական անձանց կողմից անմիջապես օտարերկրյա էլեկտրոնային հարթակներից ձեռքբերված ապրանքների ներմուծում և հայտարարագրում),
  2. էլեկտրոնային առևտրի օպերատորի միջոցով իրականացվող մատակարարումներ (էլեկտրոնային առևտրի օպերատորը էլեկտրոնային առևտրի ապրանքները ձևակերպում է «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, որից հետո ապրանքները ձեռք են բերվում ֆիզիկական անձանց կողմից, ապրանքները առաքվում են ֆիզիկական անձանց հասցեով, «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված և ֆիզիկական անձանց օտարված էլեկտրոնային առևտրի ապրանքները ձևակերպվում են «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով՝ մինչև ֆիզիկական անձանց կողմից այդպիսի ապրանքների ձեռքբերման ամսվան հաջորդող ամսվա 15-ը):
- Վերոնշյալ արձանագրությամբ մի շարք հարաբերությունների կարգավորումը վերապահվել է անդամ պետությունների ազգային օրենսդրությանը: Այդ նպատակով Կառավարության 11.12.2025թ. նիստում N1781-Ա որոշմամբ հավանություն է տրվել օրենքների փոփոխությունների նախագծերին:
- **«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխությունները՝**
  1. էլեկտրոնային առևտրի հայտարարագրի՝ մաքսային մարմնին ներկայացման ժամանակ հայտարարագրում ներառված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի ներկայացման դեպքերի սահմանում.
  2. էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ դրանց բացթողումից հետո առևտրային նպատակներով օգտագործման դեպքում անձանց պատասխանատվության սահմանում, առևտրային գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք կրում են հարկային օրենսգրքի 407-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն,
  3. չպահանջված՝ էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ ԵՏՄ մաքսային տարածքից արտահանման դեպքում դրանց փոխադրման կարգի սահմանում,
  4. մաքսային պահեստներում գտնվող էլեկտրոնային առևտրի ապրանքների ձեռքբերումներից հետո դրանց դուրսբերման և առաքման ժամանակ մաքսային մարմնին ծանուցման կարգի սահմանում,
  5. ֆիզիկական անձանց իրացված և առաքված ապրանքների վերադարձի և մաքսային պահեստներում տեղակայման նպատակներով մաքսային մարմնին ծանուցման կարգի սահմանում,
  6. մաքսային վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մաքսային մարմինների կողմից տույժերի գանձման, ծանուցումների ուղարկման, բռնագանձման միջոցների սահմանումը,
  7. էլեկտրոնային առևտրի ապրանքների արժեքի որոշման ժամանակ առանձին ընթացակարգային դրույթների սահմանում:
- **«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխությունները**
- Հաշվի առնելով այն, որ արձանագրությամբ էլեկտրոնային առևտրի ապրանքները տարանջատվել են ապրանքների այլ կատեգորիաներից, սահմանվում են մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառնությունների համար պետական տուրքի դրույքաչափեր՝
- մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար պետական տուրքի մասին դրույթները նախատեսվում են տարածել նաև էլեկտրոնային առևտրի օպերատորի կողմից մեկ էլեկտրոնային առևտրի հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների վրա,
- մեկ ուղեվորային մաքսային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար պետական տուրքի մասին դրույթները կտարածվի նաև ֆիզիկական անձանց կողմից մեկ էլեկտրոնային առևտրի հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների վրա:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Սահմանվում է գնահատողների եռամակարդակ համակարգ՝ կրտսեր, առաջատար և գլխավոր: Ըստ մասնագիտական փորձի և որակավորման՝ հստակեցվում է, թե որ խմբի մասնագետն ինչ տեսակի գույք գնահատելու իրավունք ունի:
- Ներդրվում է պատասխանատվության նոր մեխանիզմ. յուրաքանչյուր գնահատողի տարեկան տրվում է 20 միավոր: Մասնագիտական սխալների, թերացումների կամ փաստերի խեղաթյուրման դեպքում միավորները նվազեցվում են: Միավորների կորուստը ենթադրում է պարտադիր վերապատրաստում, իսկ սահմանաչափի սպառումը՝ որակավորման դադարեցում: Խստացվում է նաև հսկողությունը գնահատման ընկերությունների նկատմամբ: Եթե կազմակերպության աշխատակիցները պարբերաբար կատարում են կոպիտ խախտումներ, որոնք հանգեցնում են վկայականի զրկման, ապա տվյալ կազմակերպությունը կարող է զրկվել գործունեություն ծավալելու իրավունքից:
- Գնահատման գործընթացում ներգրավված ամբողջ փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է բացառապես էլեկտրոնային համակարգով՝ կենտրոնացված հաշվառման ծրագրի միջոցով: Ծանուցումները, պաշտոնական հաղորդակցությունը կատարվելու է համակարգի միջոցով, իսկ հաշվետվությունները կազմվելու և հաստատվելու են էլեկտրոնային եղանակով:

«Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է փոփոխել ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման կարգը՝ գործընթացը տեղափոխելով պետական կարգավորման դաշտ: Մասնավորապես՝
  1. Ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման գործառույթը Առևտրաարդյունաբերական պալատից փոխանցվում է Էկոնոմիկայի նախարարությանը,
  2. Ապրանքի ծագման երկրի որոշման փորձաքննությունը սահմանվում է որպես ծանուցման ենթակա գործունեության տեսակ,
  3. Հավաստագրերի տրամադրման համար կգանձվի պետական տուրք:

ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է Գույքային բնույթի բոլոր հանցագործությունների (թե՛ հափշտակության, թե՛ կաշառք տալու) համար սահմանել չափերի միևնույն շեմերը:
- Նախատեսվում է նաև, որ պատժի նշանակման հետաձգման դեպքում անչափահասների և մինչև 21 տարեկանների համար պետք է կիրառվեն իրենց համար օրենքով նախատեսված կրճատված վաղեմության ժամկետները:

«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ վարչապետի, նախարարների և փոխվարչապետների, վերջիններիս խորհրդականների ինչպես նաև նախարարների տեղակալների կողմից պաշտոնի ստանձնման հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ 1ամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացնի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում կտրամադրվի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն: Ուսումնասիրությունը ներառում է վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, նրանց խորհրդականների, նախարարների տեղակալների, նրանց ընտանիքի անդամների պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրերի վերլուծություն՝ համադրված, առկայության դեպքում, նույն անձանց նախորդ հայտարարագրերի տվյալների հետ:
- Առաջարկվում է կարգավորել նաև այն իրավիճակները, երբ համապատասխան պաշտոնատար անձինք օրենքով սահմանված կարգով ազատված են պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրեր ներկայացնելու պարտականությունից: Նման դեպքերում առաջարկվում է սահմանել, որ ԿԿՀ-ի կողմից բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը իրականացվում է նախկինում տրված հայտարարագրերի հիման վրա:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Վերանայվել է «դիստրիբյուտորի» հասկացությունը և տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքների ցանկը:
- Արգելվել է օտարերկրյա ալիքներով ՀՀ ներքաղաքական կյանքին միջամտող բովանդակության հեռարձակումը:
- Խստացվել են դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների գործունեության պահանջները, վերանայվել է տուգանքների համակարգը:
- Ավելացվել է նոր հոդված (58.1), որը սահմանում է ցանցային օպերատորի լիցենզիայի կասեցման և դադարեցման հստակ հիմքերը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Օրենքի նախագծով հստակեցվում են անձի՝ տրանսպորտային միջոց վարելու հակացուցում ունեցող առողջական վիճակով պայմանավորված՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ինքնաշխատ դադարեցման իրավական հիմքերը: Միաժամանակ, նախատեսվում է վարելու իրավունքի դադարեցման վերաբերյալ տվյալ անձի տեղեկանալու մասին կարգավորում: Բացի այդ, առաջարկվում է ՀՀ ներքին գործերի նախարարության հաշվեկշռում առկա տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունն իրականացնել ՀՀ ներքին գործերի նախարարության իրավասու ստորաբաժանման միջոցով:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ցամաքային անցման կետերում բեռնատար տրանսպորտային միջոցների հոսքի կանոնակարգման, Հայաստանի Հանրապետությունից մեկնման ուղղությամբ մաքսային մարմինների կողմից դրանց սպասարկման ժամանակահատվածի կրճատման, սահմանահատման գործընթացի պարզեցման, անցման կետերում կուտակումների եւ հերթերի բացառման, մաքսային եւ սահմանային այլ տեսակի հսկողության գործընթացների արդյունավետ եւ անխոչընդոտ իրականացման անհրաժեշտությամբ:
- Հիմք ընդունելով միջազգային պրակտիկայում կիրառվող կարգավորումները, նախագծով առաջարկվում է պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերի հարեւանությամբ նախատեսել վճարովի կայանատեղիների կազմակերպման գործունեություն, որի շրջանակներում կգործի հերթերի կառավարման համապատասխան էլեկտրոնային համակարգ՝ բեռնատար տրանսպորտային միջոցների շարժի հաշվառման, հերթագրման, անցման կետ մուտք գործելու թույլտվության տրամադրմանն ուղղված՝ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման նպատակներով:
- Նշված գործընթացների կազմակերպմամբ նախատեսվում է, որ անցման կետի տարածքում չեն առաջանա հերթեր եւ կուտակումներ՝ նախապես բեռնատար տրանսպորտային միջոցի եւ դրանցով փոխադրվող բեռների վերաբերյալ տեղեկությունների առկայության եւ անհրաժեշտ հսկողական գործընթացների նախանշման արդյունքում:
- Գործընթացը ենթադրում է, որ բեռնատարը նախ կայանում է այդ հատուկ տարածքում և գրանցվում էլեկտրոնային հերթում, ինչից հետո վարորդը ստանում է հստակ թույլտվություն՝ սահմանային անցման կետ մուտք գործելու համար միայն այն ժամանակ, երբ մաքսային գոտին իրականում պատրաստ է սպասարկմանը: Սա թույլ է տալիս մաքսային մարմիններին նախապես ստանալ բեռի և մեքենայի տվյալները, իրականացնել ռիսկերի գնահատում և կրճատել բուն սահմանահատման ժամանակահատվածը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Օրենքի նախագծով նախատեսվում է հստակեցնել զինծառայողների ատեստավորման գործընթացը, պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության ընդունված զինծառայողների հետագա պայմանագրային զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Առաջարկվում է լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքներում՝ դրանցում սահմանելով, որ փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի մեջ սահմանվում է նաև փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի կազմման օրվան հաջորդող ժամանակահատվածում վերակազմակերպվող իրավաբանական անձի գույքի տեսակի, կազմի, արժեքի փոփոխությունների, իրավունքների և պարտականությունների ծագման, փոփոխման, դադարման կապակցությամբ իրավահաջորդության որոշման կարգը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի N 1584-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Նախագծի ընդունմամբ կստեղծվեն համապատասխան իրավական հիմքեր ՀՀ կենտրոնական բանկին հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման համար:
- Կնախատեսվի, որ օրենքով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունների ստացման դիմումը և դրա հիման վրա տեղեկությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ստեղծված էլեկտրոնային հարթակի միջոցով, որի նկարագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն

Կիբեռանվտանգության ոլորտում կիրառելի միջազգային ստանդարտների ցանկը սահմանելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- «Կիբեռանվտանգության մասին» ՀՀ օրենքով սահմանված կենսական նշանակության ոլորտում շահագործվող կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքները պարտավոր են բավարարել նախագծով սահմանված միջազգային ստանդարտներին:
- Նախագծով սահմանված են կենսական նշանակության ոլորտները, դրանց նկատմամբ կիրառվող ստանդարտները, դրանց կիրառման ուղեցույցը, եթե այդպիսին առկա է և կիրառման ժամկետը, որը տարբեր ոլորտների դեպքում տարբերակված է:

Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- Նախագիծը սահմանում է մետաղների թափոնների և ջարդոնի արտահանման ժամանակավոր արգելք Հայաստանից դեպի Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրներ և երրորդ պետություններ:
- Արգելքը տարածվում է սև և գունավոր մետաղների, օգտագործված սարքավորումների վրա, մասնավորապես՝ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308, 7402 ծածկագրերին դասվող, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000, 7902 00 000, 8002 00 000, 8101 97 000, 8102 97 000, 8103 30 000, 8104 20 000, 8105 30 000, 8106, 8112 61 00, 8108 30 000, 8109 3, 8110 20 000, 8111 00 190, 8112 13 000, 8112 22 000, 8112 31 000 0, 8112 41 000 1, 8112 52 000, 8112 92 210, 8113 00 400 ծածկագրերին դասվող և ԱՏԳ ԱԱ 8415-8417, 8419-8421, 8425-8426, 8428, 8435, 8438, 8449 00 000 0, 8454-8466, 8474-8475, 8477, 8481, 8482-8484, 8487, 8502-8504, 8507, 8514, 8516, 8544, 8549 ծածկագրերին դասվող ապրանքների վրա:
- Արգելքը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող ապրանքների վրա, ԱՏԳ ԱԱ 8415-8417, 8419-8421, 8425-8426, 8428, 8435, 8438, 8449 00 000 0, 8454-8466, 8474-8475, 8477, 8481, 8482-8484, 8487, 8502-8504, 8507, 8514, 8516, 8544, 8549 ծածկագրերին դասվող օգտագործված կամ սպառված կամ թափոն և ջարդոն հանդիսացող ապրանքների վրա, որոնք չեն գերազանցում ակնհայտ առևտրային չափաքանակները, և քաղաքացիական օդանավերի և երկաթուղային տրանսպորտի շահագործման համար նախատեսված ապրանքների վրա:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթը նպատակ ունի բարեփոխել հարկային վարչարարությունը և հարկային հանցագործությունների քրեական հետապնդման կարգը: Այն հիմնականում կենտրոնացած է հետևյալ ուղղությունների վրա.

1. Ներկայումս հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարները չկատարելու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված 10 միլիոն դրամը (խոշոր) և 20 միլիոն դրամը (առանձնապես խոշոր) գերազանցելու դեպքում: Նախատեսվում է այս շեմերը դարձնել համապատասխանաբար 25 միլիոն դրամ և 50 միլիոն դրամ: Նշված փոփոխությունների արդյունքում տեղի կունենա մասնակի ապաքրեականացում՝ հարկերից խուսափելու հանցավոր համարվող արարքների շրջանակի նեղացում:
2. Ներկայումս հաճախ խնդիր է առաջանում, երբ հարկային մարմինը վարչական վեճի ընթացքում միանգամից քրեական հաղորդում է տալիս, մինչդեռ վարչական ակտը դեռ կարող է բողոքարկվել և անվավեր ճանաչվել: Առաջարկվում է սահմանել, որ Հարկային մարմինը քրեական վարույթ նախաձեռնելու հաղորդում կներկայացնի միայն այն դեպքում, երբ վարչական ակտը մտել է ուժի մեջ և սպառվել են վարչական բողոքարկման բոլոր փուլերը:

Անձը հաստատող փաստաթղթի մասին օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Ուժը կորցրած է ճանաչվում «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքը, ինչի արդյունքում ակնկալվում է ընդունել մեկ միասնական «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքը, որը համապարփակ ձևով կպարունակի անձանց կարգավիճակը և անձը հաստատող փաստաթղթերի մասին դրույթները: Սրա հետ մեկտեղ, համապատասխանաբար կփոփոխվեն նաև հարակից օրենքները:
- Հանվում է հատուկ կացության կարգավիճակի ինստիտուտը՝ սահմանելով որոշ բացառություններ անցումային դրույթներում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ապրանքներ արտահանելու և (կամ) ներմուծելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի դրույքաչափերի շարքում առաջարկվում է լրացնել նաև ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7402 ծածկագրին դասվող պղնձե անոդները, որի համար պետական տուրքը կկազմի բազային տուրքի 400-ապատիկը:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով նախատեսվում է, որ ոսկուց և թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր արտադրողի կողմից արտադրված՝ ոսկուց և թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի օտարման գործարքների մասով՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվելու Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ով հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսի և տվյալ իրի արտադրության համար օգտագործված ոսկու և թանկարժեք մետաղների ձեռք բերման գնի դրական տարբերությունը, բայց ոչ պակաս, քան օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող ԱԱՀ-ով հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսի 25 տոկոսը:
- Նախատեսվում է նաև, որ ոսկուց և թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ոսկուց և թանկարժեք մետաղներից պատ-րաստված իրերի օտարման գործարքների մասով՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվելու Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ով հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսի և տվյալ իրի ձեռք բերման գնի ներառյալ՝ ԱԱՀ-ն դրական տար-բերությունը: Միաժամանակ, առաջարկվում է վերջիններիս մասով սահմանափակել ոսկուց և թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի օտարման գործարքներին վերագրվող ձեռքբերումների մասով մատակարարի կողմից դուրս գրված հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում կամ ներմուծման հարկային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումների իրավունքը:
- Առաջարկվում է նաև ուժը կորցրած է ճանաչել ԱԱՀ վճարող հարկային գործակալին ոսկուց և թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարումից ստացվող եկամուտների՝ եկամտային հարկով չհարկելու օրենսդրական կարգավորումը՝ այն պահպանելով միայն շրջանառության հարկ վճարող հարկային գործակալների մասով:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին օրենքում լրացում կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» (հասանելի է հետևյալ հղումով)

- Օրենքների փոփոխության նախագծի փաթեթով սահմանվում է, որ բջջային հեռախոսների վաճառքը կդառնա ծանուցման ենթակա գործունեություն, իսկ բջջային հեռախոսների ներմուծում և վաճառք իրականացնող վաճառողները պետք է մինչև բջջային հեռախոսների վաճառքը նախապես օրենքով սահմանված կարգով գրանցեն այդ բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչները (IMEI):
- Նախատեսվում են նաև պետական տուրքի նոր տեսակներ, բջջային հեռախոսների ներմուծման, առուվաճառքի վերաբերյալ, մասնավորապես՝

1. Բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչների (IMEI) տվյալների միասնական տեղեկատվական համակարգում տվյալ տարվա ընթացքում առաջին անգամ ֆիզիկական անձի կողմից ներմուծված բջջային հեռախոսի համար գրանցման համար բազային տուրքի 3ապատիկի չափով,
2. Բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչների (IMEI) տվյալների միասնական տեղեկատվական համակարգում ֆիզիկական անձի կողմից տվյալ տարվա ընթացքում երկրորդ անգամ ներմուծվող և ներմուծման օրվան նախորդ երկու տարիներին արտադրված բջջային հեռախոսի համար գրանցման համար բազային տուրքի 20ապատիկի չափով,
3. Բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչների (IMEI) տվյալների միասնական տեղեկատվական համակարգում տվյալ տարվա ընթացքում երկրորդ անգամ ներմուծվող և ներմուծման օրվան նախորդող երկու տարվան գերազանցող ժամկետով արտադրության բջջային հեռախոսի համար գրանցման համար բազային տուրքի 100ապատիկի չափով,
4. Բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչների (IMEI) տվյալների միասնական տեղեկատվական համակարգում երեք և ավելի անգամ ներմուծվող բջջային հեռախոսի համար գրանցման համար բազային տուրքի 100ապատիկի չափով,
5. Բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչների (IMEI) տվյալների միասնական տեղեկատվական համակարգում երեք և ավելի անգամ ներմուծվող բջջային հեռախոսի համար գրանցման համար բազային տուրքի 3ապատիկի չափով:

- Սահմանվում է նաև, որ բջջային հեռախոսների ներմուծման և վաճառքի համար վճարվում է պետական տուրք բազային տուրքի 250ապատիկի չափով, սակայն տվյալ պետական տուրքի վճարումից ազատված կլինեն Բջջային հեռախոսակապի ցանցի օպերատորները, ովքեր ներմուծում և վաճառում են բջջային հեռախոսներ:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքով 2024 թվականին կատարված փոփոխություններով կարգավորվել են ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման համակարգի ներդրման համապատասխան մեխանիզմները, սակայն իրավակիրառ պրակ-տիկայում ի հայտ են եկել էական խնդիրներ, ուստի նախատեսվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակման կարգը վերաշարադրել: